Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա
Երևանի պետական համալսարան
«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ

«1946-1948 ԹԹ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԴԱՍԵՐԸ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՅՍՕՐ»

Համահայկական գիտաժողով
Զեկուցումների ժողովածու

"THE 1946-1948 REPATRIATION AND ITS LESSONS: THE ISSUE OF REPATRIATION TODAY"

Pan-Armenian Conference
Collection of Papers

"РЕПАТРИАЦИЯ 1946-1948ГГ И ЕЕ УРОКИ: ПРОБЛЕМА РЕПАТРИАЦИИ СЕГОДНЯ"

Всеармянская конференция
Сборник докладов

12-14 դեկտեմբերի, 2008թ.
Ծաղկաձոր, Հայաստանի Հանրապետություն

ԵՐԵՎԱՆ
ԼԻՄՈՒՏ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2009

«ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ»

Ռուբինա Փիրումեան (ԱՄՆ)

Մեծ եղեռնի մնացորդացի դէպի Ռուսահայաստան ու Հայաստանի անկախ հանրապետութիւն գաղթից եւ Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, առաջին զանգուածային եւ կազմակերպուած ներգաղթը տեղի ունեցաւ 1946-48 թուականներին: Ի հարկէ, Հայաստանի խորհրդայնացումից յետոյ եւս, Ցեղասպանութիւնից փրկուած ու աշխարհացրիւ հայութեան համար կենտրոնածիգ ուժ էր Հայաստանը՝ թէկուզ խորհրդային տիրապետութեան տակ, թէկուզ ո՛չ այնքան հարազատ՝ Արեւմտահայաստանը կորցրած արեւմտահայի համար: Միջանկեալ ասեմ, որ որոշ գիտնականների կարծիքով հայրենադարձութիւն (repatriation) եզրը ճիշտ չէ, որովհետեւ Հայաստան գաղթողները իրենց նախապէս բնակած վայրերը չէին վերադառնում՝ ո՛չ վանեցի, խարբերդցի, էրզրումցի եւ այլ արեւմտահայը եւ ո՛չ էլ Իրանի քաղաքներից ու գիւղերից գաղթողները: Բայց թողնենք այս բառախաղը: 1921-36 թուականները Հայաստան գաղթեցին 42 հազար մարդ ու տեղաւորուեցին մեծ մասամբ Երեւանի շուրջ կազմուած նոր բնակավայրերում՝ դրանք իրենց ծննդավայրերի անուններով՝ Նոր Արաբկիր, Նոր Մարաշ, Նոր Սեբաստիա, Նոր Հաճըն, Նոր Մալաթիա, Զէյթուն եւ այլն կոչելով:[201]

1937-ին, ստալինեան ճնշումների եւ նրա վարած նախապատերազմեան սուր քաղաքականութեան եւ մանաւանդ՝ նրա որդեգրած հակազգային ուղեգծի պատճառով, Սփիւռք-Հայաստան յարաբերութիւնները խզուեցին, ու ներգաղթը կանգ առաւ:

Երկրորդ համաշխարհային բատերազմից յետոյ, յաղթող դաշնակից պետութիւնների համար պատերազմական աւարը բաժանելու եւ աշխարհաքաղաքական նոր քարտէս գծելու պահն էր հասել, եւ բնականաբար, տնտեսապէս հիւծուած Խորհրդային Միութեան եւ նրա ղեկավար՝ Ստալինի ուշադրութեան կենտրոնում պիտի լինէր նաեւ 1921-ին Մոսկուայի պայմանագրով Թուրքիային զիջած Կարսն ու Արտահանը:

---

[201] Աւելի մանրամասնութիւնները տեսնել՝ Հայկ. Սով. Հանրագ., հատոր 6, էջ 208:

Ստալինի գործողութեան ծրագիրը, քաղաքական եւ տնտեսական դրդապատճառներով, սփիւռքահայութեանը սիրաշահելու տարրեր էր պարունակում: Պարզ էր, որ Ստալինը հայրենաբաղձ եւ հայրենակարօտ սփիւռքահայութեան սիրտը պիտի կարողանար գրաւել, եթէ իր հողային պահանջները Թուրքիայից ձեւակերպէր Սփիւռքի մէկուկէս միլիոն հայ գաղթականութեանը Սովետական Հայաստան հրաւիրելով: Նոյն այս նպատակներով եւ որպէս Խ. Միութեան շահերը հետապնդող դիւանագիտական քայլ, Ստալինը թոյլատրել էր Հայաստանում Ազգային Եկեղեցական Ժողով հրաւիրել՝ մասնակցութեամբ մեծ թուով սփիւռքահայերի, նաեւ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի: Ներկայացել էր 1938-ից ի վեր թափուր մնացած էջմիածնի կաթողիկոսական աթոռը լեցնելու պատեհ առիթը: Այսպիսով, Ստալինը ազատութիւն էր տալիս Հայոց Եկեղեցուն, բայց միեւնոյն ժամանակ սիրաշահում էր սփիւռքահայութեանը, որ նիւթական աչքառու աղբիւր կարող էր լինել Հայաստանի համար եւ վերջին հաշուով Խ. Միութեան բուտճէի համար: Ծրագրի գործադրումը սկսելու առաջին արձագանքը հնչեց էջմիածնից: Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Զ-ի ընտրութիւնից անմիջապէս յետոյ, 1946-ի Յունիս 26-ին, Ազգային Եկեղեցական Ժողովի մի քանի մասնակիցների անունից, դիմումնագիր յղուեց Ստալինին, ուր յիշուած էր աշխարհացրիւ, հայրենակարօտ հայերի Հայաստան վերադառնալու մասին: Յիշուած էր նաեւ Թրքահայաստանի հողահաւաքի հարցը: Ստալինը օգտագործեց այդ դիմումնագիրը, ինչպէս նաեւ սփիւռքահայ կազմակերպութիւնների իրեն յղած բազմաթիւ դիմումները՝ Թուրքիայից իր պահանջները հիմնաւորելու ու դրան նաեւ զգացական բնոյթ տալու համար: Փակագիծ բացելով այստեղ, չմոռանանք, որ հայահաւաքի ու հողահաւաքի նպատակով առաջին այսպիսի դիմում-յուշագիր Հ.Յ.Դ. Հայ դատի յանձնախմբի կողմից, Սիմոն Վրացեանի նախագահութեամբ, յղուած էր ՄԱԿի բացման առիթով գումարուած ազգերի համաժողովին, 1945ի Մարտ 7, Սան Ֆրանսիսքօ:

Հայրենադարձութեան պաշտօնական թոյլտուութիւնը հրապարակուեց 1945ի Նոյեմբերին: Ներգաղթողների առաջին խումբը Հայաստան հասաւ 1946ի Յունիսին: Զօրակոչի ենթարկուեցին Սփիւռքի բոլոր կառոյցները՝ եկեղեցիներ, Ռամկավար եւ Հնչակեան կուսակցութիւններ, նոյնիսկ հակասովետական սեպուած Դաշնակցութիւնը: Ազգային նպա-

տակներ հետապնդող (գոնէ առերեւոյթ) այս հսկայ ծրագիրը կարելի չէր անուշադրութեան մատնել: Մինչեւ 1948 թուականը 12 երկրներից Հայաստան ներգաղթեցին 89700 մարդ՝ մեծ մասամբ Լիբանանից, Սուրիայից, Իրանից, Յունաստանից, Բուլղարիայից, Ռումինիայից, Ֆրանսիայից, Եգիպտոսից, Պաղեստինից, եւ ԱՄՆից:[202] Գուցէ եւ ո՛չ տարօրինակ կամ ո՛չ անսպասելի զուգադիպութիւն կարելի է համարել այն, որ այս թիւը համապատասխանում էր Բ. Աշխարհամարտին հայերի տուած զոհերի թուին:

Խ. Միութեան քաղաքական շահերին ի նպաստ ծրագրուած եւ սփիւռքահայութեան հայրենասիրական եւ հայրենակարօտ զգացումների շահագործմամբ գործադրուած ներգաղթը չէր կարող լիակատար յաջողութեան հասնել եւ ազգային շահերին ծառայել, քանի որ գործնական գետնի վրայ նպատակը զոհ գնաց միջոցների անբաւարարութեանը եւ պայմանների անբարենպաստութեան:

Ինչո՞ւ կազմակերպուեց ներգաղթը:

Ուսումնասիրութիւններ շատ կան ներգաղթի կազմակերպման դրդապատճառները վերծանող: Ամենից համոզիչը ստալինեան հողային եւ տնտեսական քաղաքականութեան փաստն է, որ այս պարագայում համընկնում էր հայոց ազգային շահերին: Ապա՝ արտասահմանի հայերով լեցնել այն հսկայ բացը, որ պատերազմում զոհուած հայերի անհամեմատ մեծ թուի պատճառով առաջացել էր Հայաստանի գործոյժի մէջ: Հնարաւոր դրդապատճառ է նաեւ Հայաստանի բնակչութեան թուի հարցը, որ այդ օրերին մէկ միլիոնից պակաս լինելով, վտանգի տակ էր դնում նրա Սովետական «անկախ» հանրապետութեան իրավիճակը: Սպառնալիք էր Հայաստանը Վրաստանին կցուելը եւ որպէս ինքնավար հանրապետութիւն ճանաչուելը:

«Նկատի ունենալով բնակարանային ու այլ կարգի դժուարութիւններ, հայրենադարձութիւնը ժամանակաւորապէս դադարեց»,[203] բացատրում է ՀՍ Հանրագիտարանը: Բայց ծալքերը շատ խորն են: Սովորական ֆորմիւլա է դարձել այն բացատրութիւնը, թէ Հայաստանը պատրաստ չէր այդքան մեծ թուով ներգաղթողներ ընդունելու: Պիտի ասել՝ պատրաստ չէր տնտեսապէս, բայց նաեւ մտայնութեամբ: Ձանազան մշակոյթ-

---

[202] Մանրամասնութիւնները նոյն տեղում:
[203] Նոյն տեղում, էջ 209:

ների ու կենցաղային սովորութիւնների տէր, կրթութեան տարբեր մակարդակներով եւ տնտեսական-ընկերային տարբեր շերտերի պատկանող մարդկանց հարազատօրէն ընդունելու, նրանց ո՛չ անպայման տնտեսական կարիքները հոգալու, նրանց հետ մերուելու եւ նրանց տարբեր մասնագիտութիւններից օգտուելու հարցում թերացաւ հայաստանաբնակ ժողովուրդը: Ընդհակառակը՝ կասկածանքով, երբեմն էլ հեգնանքով վարուեց նրանց հետ ու շատերին մինչեւ աքսոր հասցրեց: Իսկ հայրենադարձները՞: Բոլորս գիտենք այն գաղտնի քոդաւորուած նամակների մասին, որոնք սովետական խիստ գրաքննութիւնից աննկատ անցած՝ Սփիւռք հասան: Բայց այս մասին յետոյ:

Ներգաղթը դադարեց 1948-ին: Այդ տարի, մեծ դժուարութիւններից յետոյ, Հայաստան ընդունուեցին միայն մի որոշ մասը նրանցից, որոնք բոլոր կարգադրութիւնները կատարած, իրենց տուն ու տեղն ու գործը ծախած, իրենց ապրած երկրի հետ կապերը կտրած, Ներգաղթի կոմիտէների դռներն էին մնացել: Միւսները, մի մեծ զանգուած, մանաւանդ՝ Լիբանանում, Սիրիայում եւ Իրանում, այնպէս էլ անորոշ ու կախեալ մնացին: Դրանց համար կեանքը այլեւս իր բնական հունը չգտաւ: Իրականութիւնն այն էր, որ պաղ պատերազմը ուժգնացել էր ու Ստալինը պարտաւոր էր լքել իր հողային պահանջներն ու ծաւալապաշտութիւնը: Հայահաւաքն էլ դրա հետ մոռացուեց: Այնուամենայնիւ, 1962-ից սկսեալ մինչեւ 1982, մի դանդաղ ալիք 30 երկրներից 32500 մարդ բերեց Հայաստան՝ հայրենադարձների թիւը 1921-1982ը հասցնելով 170000-ի: Միւս կողմից, երբ 1975ի Հելսինքեան պայմանագրին հետեւելով, ընտանիքների վերամիացման ծածքի տակ Խ. Միութիւնը պարտադրուեց թոյլատրել հայերի եւ հրեաների ելքը երկրից, ելքը արտագաղթի վերածուեց: Հայաստանից արտագաղթել սկսեցին հենց հայրենադարձների ընտանիքներ Հայաստանում ծնուած իրենց զաւակներով, հարսներով ու փեսաներով՝ Սփիւռքում իրենց հարազատներին միանալու պատրուակով, բայց ի հարկէ մեծ մասամբ գաղթը դէպի իրենց թողած երկրները չէր որքան որ դէպի Արեւմուտք, մանաւանդ՝ Ամերիկա:

Արտագաղթը շարունակւում է ծանր կամ նուազ ուժգնութեամբ: Եվ հիմա եկել ենք մտածելու, թէ ինչպէ՞ս կարելի է խրախուսել ներգաղթը այնպիսի պայմաններում երբ արտագաղթը արմատախիլ չի եղել:

Ես այս հարցը պիտի քննարկեմ հետեւեալ հարցումին տուածս պատասխանների ընդմիջից: Ի՞նչ էին ներգաղթողների առջեւ յայտնուած դժուարութիւնները, որոնք վերացուած պիտի տեսնի այսօրուայ դէպի Հայաստան միտող հայ մարդը:

Ա. Կառավարութիւնը ներգաղթող իւրաքանչիւր ընտանիքին 30000 ռուբլի էր տալիս առանց տոկոսի եւ փորձում էր բնակարան հայթայթել որքան կարելի էր շուտ: Այսօր, հայրենադարձութիւնը գրաւիչ դարձնող երեւոյթներ չեն դրանք:

Բ. Ներգաղթը կազմակերպելու համար Հայաստանից ուղարկուած կոմիտէները բոլոր երկրներում արձանագրում էին միայն նրանց, ովքեր հակասովետական տրամադրութիւններ չունէին: Դաշնակցութեան այն անդամները, որոնք հայրենասի-րական զգացումներով տարուած Հայաստան գնալ էին ցանկա-նում, պարտադրեալ մեղայագիր պիտի գրէին եւ հրաժարուէին Դաշնակցութիւնից: Շատերը չդիմեցին՝ պարզապէս այդ մեղա-յագիրը չգրելու համար: Այսօր նման հարց գոյութիւն չունի: Առ նուազն արտաքնապէս հանդուրժւում են բոլոր կուսակցու-թիւնները:

Գ. Հայրենադարձների մեծ մասը Հայաստանում, ստալինեան օրինակով սովետական քաղաքացի դարձած հայերի անտար-բերութիւնը դէպի ազգայինն ու հայկականը տեսնելով ու իրենց առօրեայի վրայ համայնավար վարչակարգի ճնշումները զգալով, յուսախաբւում էին եւ իրենց օտար էին զգում: Այս երեւոյթը դեռ առգոյ է ուրիշ իմաստով: Սովետական մտայ-նութիւնը չի վերացուել արմատապէս եւ դրան աւելացել է կոռռուպցիա կոչուած ահռելի կենդանին, որ իր երախն է ցոյց տալիս կաշառակերութեամբ, գործարքներ խոչընդոտելով կամ դրանք արգիլելու սպառնալիքներով ու անարդար զավթում-ներով: Իշխանութիւնը տեղեակ է այս երեւոյթի մասին եւ կարծեմ փորձում է բարելաւել իրավիճակը:

Դ. Ներգաղթողներին կամ նոյնիսկ Հայաստանում ծնուած նրանց զաւակներին բարձր պաշտօններ չէին վստահւում. պատճառը ի հարկէ նրանց բուրժուա երկրից գալու իրողու-թիւնն էր, որ միշտ կասկածի տակ էր դնում նրանց անկեղծութիւնն ու քաղաքական պատկանելիութիւնը: Այսօր, այդ վերաբերմունքը այլ պատճառներով է դրսեւորւում:

Ե. Յետպատերազմեան հայրենադարձների մեծ դժուարու-թիւններից մէկը լեզուի հարցն էր, արեւմտահայերէնը նուաստացնել, դասական ուղղագրութիւնը արհամարհել եւ

արեւելահայերէնն ու իր սովետական ուղղագրութիւնը պարտադրել: Պարզ է, որ երկիրը պիտի ունենայ մէկ պետական լեզու եւ համապատասխան ուղղագրութիւն, մի բան, որ բռնի ուժով պահպանուեց Հայաստանում: Բայց հայ իրականութիւնը այդ պարտադրուած կաղապարի մէջ չի տեղաւորւում: Յատկանշական է, որ Սփիւռք-Հայրենիք մերձեցման տարիներին, Հայաստանի Համայնավար կուսակցութիւնն անգամ երկու գրական լեզուների մերձեցման հարց էր դնում: «Ասպարէզ»ի 1989 Սեպտեմբեր 13ի համարում կարդում ենք. «Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէն ժողովրդային քնարկման յանձնած է հայերէն լեզուի "գործառութեան հետագայ բարելաւման եւ համակողմանի կիրառութեան միջոցառումների մասին" որոշման նախագիծը»: Սա կարող էր միայն ոգեւորութիւն պատճառել: Նախագծի մէջ նշուած էին դժուարութիւններն ու խոչընդոտները եւ լուծումներ առաջարկուած: Դրանց մէջ ասուած էր, հետեւողական աշխատանք տանել հայոց լեզուի երկու ճիւղերի՝ արեւմտահայերէնի եւ արեւմտահայերէնի հետագայ զարգացման, մերձեցման եւ փոխհարստացման ուղղութեամբ՝ այդ գործում ներգրաւելով Հայաստանի եւ արտասահմանի հայագէտներին: Տրամադրութիւնը կար, բայց ժամանակները դաւաճանեցին. իսկ անկախութեան առաջին տարիներին հարցը անտեղիօրէն սուր քաղաքական բնոյթ ստացաւ ու մի կողմ նետուեց:

Զ. Ըստ ՍՍՀՄ Գերագոյն սովետի նախագահութեան 1946-ի Հոկտ. 19ի հրամանագրի, արտասահմանից Սովետական Հայաստան վերադարձող հայերը համարւում էին ՍՍՀՄ քաղաքացիներ:[204] Այսինքն՝ հայրենադարձը ստանում էր քաղաքացիութիւն իր բոլոր շնորհներով եւ իրաւունքներով: Այսօր, արտասահմանից Հայաստան հաստատուած հայը ամենալաւ պարագայում տասը տարուայ յատուկ կարգավիճակի իրաւունք է ստանում, եւ դեռ Հայաստանում ծնուած նրա երեխան էլ Հայաստանի քաղաքացի չի համարւում: Իսկ այսօրուայ երկքաղաքացիութեան օրէնքը դեռ երկար ճամբայ ունի յղկուելու եւ լիարժէք գործադրելի դառնալու համար:

Ներգաղթի ձախողանքը երկարատեւ տպաւորութիւն թողեց Սփիւռքի եւ մանաւանդ՝ Սփիւռք-Հայրենիք յարաբերութիւնների վրայ: Տպաւորութիւնը Հայաստան վերադառնալու եւ Հայաստանում ապրելու տենչը խամրեց, մանաւանդ՝ երբ

---

[204] Հայկ. Սով. Հանրագ., հատոր 6, էջ 207:

երկաթէ վարագոյրը իջաւ աւելի խորացնելու ճեղքը երկու հատուածների միջեւ, կտրելու նրանց հոգեկան ու ֆիզիքական կապը:

Հայաստանի անկախացումը մի կարճ ժամանակի համար վերացրեց այդ բացասական տրամադրութիւնը՝ տեղի տալով ռոմանտիզմին, որ նոյնքան վնասակար էր: Մեծ իդեալներով հայրենիք եկած, Ղարաբաղեան ճակատներում կռուելու պատրաստ, կամ նիւթական օգնութիւն բերած ու գործատեղիներ բացած հայը չգտաւ իր երազած «անուշ հայրենիքը» եւ սովետական լուծի տակ տառապած ու այժմ ազատութիւն գտած այն ժողովուրդը, որ գրկաբաց պիտի ընդունէր իր որբ մնացած եղբայրներին ու քոյրերին, օգտուէր նրանցից ու սատարէր նրանց: Արդարութիւն պահանջողները «ծեծ» կերան, իսկ նարինջ ուտողները դուրս շպրտուեցին: Լեղի համը վերադարձաւ սփիւռքահայի բերանին. ու հիմա, իւրաքանչիւր իշխանափոխութեան հետ դարձեալ լեցւում ենք յոյսով ու հաւատով, նայում տիրող իրականութեան ու ապագայի երազներ փայփայում:

Հայաստան հաստատուելու ընդհանուր ցանկութիւն գոյութիւն չունի համայն Սփիւռքում: Բացի որոշ իդեալիստների, որոնք ի գին ամենինչի եկել եւ մնում են այստեղ: Ո՛չ միայն Արեւմուտքից, այլ նաեւ տնտեսապէս եւ քաղաքական-ընկերային տեսակէտից աւելի աննպաստ Միջին Արեւելքի երկրներից, երիտասարդութիւնը ձգտում է դէպի ԱՄՆ, Քանադա, Ֆրանսիա, Աւստրալիա կամ Ռուսաստան: Ցաւալի է, որ Իրանից եւ Իրաքից գաղթողները ժամանակաւորապէս Հայաստան հաստատուելով, մեծ մասամբ աշխատանք չգտնելու պատճառով լքում են Հայաստանը:

Երանի թէ ներկայ իշխանութեան եւ մանաւանդ՝ Սփիւռքի նախարարութեան ուշադրութեան կենտրոնում գտնուող այս հարցը իր գործնական լուծումներին հասցուի ու Հայաստանում հաստատուելը երիտասարդութեան եւ ընտանիքների համար դառնայ գրաւիչ՝

> լինելով ապահով միջավայր երեխաների դաստիարակութեան համար,

> ունենալով դպրոցական եւ բարձրագոյն կրթական բարձր մակարդակ,

> հաւասար իրաւունքներ հայրենադարձի եւ Հայաստանի քաղաքացու միջեւ բոլոր բնագաւառներում,

> սփիւռքահային գրաւող կամ Հայաստանի Բուհերն աւար-տած սփիւռքահայ երիտասարդին յարմար աշխատատեղիներ,
> հարկայինի եւ կառավարական բիւրօկրատիայի ճնշումներից զերծ, հայրենադարձների համար նոր գործարք սկսելու, նոր աշխատատեղիներ բացելու հնարաւորութիւն:

Իսկ մինչ այդ, փորձենք օգտագործել ներկայացած առիթը՝ ձեռքձեռքի տալու՝ այս եւ բոլոր այլ դժուարութիւնները վերացնելու համար: